Բյուրոյի խորհրդի որոշման եզրափակիչ մասի ամփոփ նյութ

«ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍՊԸ-ի ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի ավտոապահովագրողների բյուրոյի խորհրդի 29.11.2016թ. թիվ 10 արձանագրությամբ «ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ապահովագրական ՍՊԸ-ն Բյուրոյի կանոնների խախտման համար ենթարկվել է կարգապահական տույժի.

RL 1-001 կանոնների (խախտման պահին գործող խմբագրությամբ) ենթահավելված 2.4-ի 2-րդ կետի և RL 1-011 կանոնների 1-ին կետի 9-րդ ենթակետի խախտման համար Ընկերության նկատմամբ կիրառվել է 172.800 Հայաստանի Հանրապետության դրամի չափով տուգանք՝ ապագայում նման խախտումներ չկրկնելու հանձարարականով, իսկ RL 1-001 կանոնների (խախտման պահին գործող խմբագրությամբ) 16-րդ կետի և հավելված 1.2-ի 2-րդ բաժնով սահմանված ԱՊՊԱ վկայագիրը լրացնելու հրահանգի խախտման համար Ընկերությանը հայտարարվել է նախազգուշացում՝ ապագայում նման խախտումներ չկրկնելու հանձարարականով:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ» ԻԱՄ
ՀՀ, 0010 Երևան, Հանրապետության 22, տարածք 2
Հեռ. +37410 58 00 32, ֆաքս +37410 51 92 00
էլ-փոստ info@paap.am, www.paap.am